

ՀԱՅԿ ՊԱՐԻԿԵԱՆ, ՅՈՎՆԱՆ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ, «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԻՈՅ ՀԱՅ ՏՊԱՐԱՆՆԵՐՈՒ»։ Հրատ. Հ. Բ. Ը. Մ. Ի «Մատենագիտական Յանձնախումբ»ի։ Հայէպ, սպ. «Հայէպ», 1974, 264 էջ։ Տպաքանակ՝ 250։

Հայ գաղութներու պատմութեան մէջ կարեւոր տեղ կը գրաւէ Հալէպը։ Իսկ գաղութի մը պատմութեան վերականգնումին մէջ՝ հոն հրատարակուած մամուլն ու գիրքերը։ Ուրեմն, երբեք պատահական չէ, որ Սուրիահայ գաղութի պատմութեան զծով, առաջին հերթին, Հալէպի Հ. Բ. Ը. Մ. Ի «Մատենագիտական Յանձնախումբ»ը լոյս կ'ընծայէ «Պատմութիւն Սուրիոյ Հայ Տպաքաններու» հատորը։ Հատորը պատմութիւնն է փառաւոր անցեալ ունեցող այս հայահոծ գաղութին մէջ գործող հայ տպարաններուն, հայերէն լեզուով հրատարակութիւններ ունեցած տեղական տպարաններուն, հայ մամուլին, գիրքերուն, մշակութային ու քաղաքական երեւոյթներուն։

Երբք տարուան «սպառիչ վազք ու յոյնութիւն», ինչպէս նաեւ «վանականի խտտակրօն աշխատանք եւ բժանիւղրութիւն» հարկ եղած են գիրքը պատրաստողներուն, որպէսզի կարելի դառնայ հրատարակութիւնը այսքան կարեւոր գիրքի մը։ Անկախ ամէն բանէ, նման գիրքի մը պատրաստութեան գաղտնիարը ինքնին զնահատանքի արժանի երեւոյթ մըն է։ Վարակիչ դառնալու է օրինակը յատկապէս լիբանանահայ գաղութին համար, որպէսզի օր մը, այս գաղութն ալ չգտնուի այնպիսի դժուարութիւններու առջեւ, զորս գիմազրուած են «Պատմութիւն Սուրիոյ Հայ Տպաքաններու» խմբագիրներն ու աշխատակիցները, մինչեւ իսկ մօտաւոր անցեալի պատկանող բաղմամբիւ հրատարակութիւններ ստուգելու ժամանակ։

Մատենագիտական այս գիրքը, որ ըստ հեղինակներուն «կ'ընդգրկէ դարէ մը աւելի ժամանակաշրջանի մը (1869-1974) հայ տիպ ու տառին հոգեւոր ժառանգութիւնը» (էջ 8), իրականութեան մէջ մեզի կու տայ պատկերացումը վերջին 60-ամեակին։ Որովհետեւ

19-րդ դարու մէջ կը գտնենք մեկուսի եղելութիւն մը, յանձին «Պրուսիա» թերթին (Հալէպի կուսակալութեան պաշտօնաթերթ), որ 1868 թ.ին ունեցած է հայաստան թրքերէն բաժին մը (ոչ թէ 1869 թ.ին, ինչպէս վերեւ մէջբերուած թուականին մէջ գրուած է):

Գիրքին ներածութեան մէջ (էջ 7-15) յիշատակուած են այն մատենագիտական աղբիւրները, որոնցմէ օգտուած են Հ. Պարիկեանն ու Յ. Վարժապետեանը: Ներկայացուած ցանկը ամբողջական չէ: Կան բազմաթիւ այլ օգտագործելի աղբիւրներ: Սակայն երկուքը անոնցմէ անպայմանօրէն օգտագործուելու էին նման աշխատասիրութեան մը պարագային: Անոնք են՝ Յովհ. Պետրոսեանի «Հայ Պարբերական Մամուլի Բիբլիոգրաֆիա», Բ. հտր., (Երեւան, 1957) եւ Գարեգին Լեւոնեանի «Հայոց Պարբերական Մամուլը», (Բ. տիպ, Երեւան, 1934):

«Մեր ներկայ մատենագիտական աշխատութեամբ մենք յաւակնոտութիւնը չունինք լրակատար գործ մը ներկայացնելու», կը գրէ պատասխանատու խմբագիր Հայկ Պարիկեան (էջ 14), իսկ քիչ մը անդին կ'աւելցնէ. «...Մեր առջեւ կ'ունենանք 456 անուն գիրք եւ 110 պարբերական հրատարակութիւններ: Մենք կ'սկսած չունինք պարբերական մամուլի քանակական ճշգուծենէն: Սակայն, նոյնը չենք կրնար ըսել սպագիր գիրքերու պարագային» (էջ 11):

Հակառակ այս հաստատումին, մինչեւ գրքին հրատարակութեան աւարտը, պարբերական մամուլի թիւը հասած է 113-ի... Եւ տակաւին այս նոր թիւը կարելի չէ վերջնական նկատել: Մատենագիտական աշխատանքներու պարագային, հարկ է ըլլալ շրջահայեաց, ու միշտ լուսանցք մը թողուլ կարելի հաւանականութիւններու առջեւ: Ասոր լաւագոյն սպացոյցը ահաւասիկ. կը յիշատակենք մոռացութեան տրուած քանի մը թերթեր եւս.

#### Ա. ՆՈՐ ԹԵՐԹԵՐ

ՅԱՆԲ - Հրատ. Հայ Աւետ. Էմմանուէլ Կիրակնօրեայ դպրոցի շրջանաւարտներուն: Հայկազեան Գոլէճի Հայագիտական գրադարանը ունի այս թերթին Ա. թիւը, Ա. տարի, Նոյ. 1961: Մեքենագիր բազմագրուած, 17 էջ: 32×21 սմ.:

L'Orpheline (Որբուհի) - Հալէպի Նախախնամութեան Որբանոցի եւ Սրբուհի Աննա Վարժարանի (Անարատ Յղութեան Բոյրերու) թերթը: Լոյս տեսած՝ 1926-1936, կանոնաւոր կերպով, տարին գրեթէ 12 թիւ: Լման հաւաքածոյ մը կը գտնուի Վիեննայի Միխիթարեան Միարանութեան Մատենադարանը: Ուրիշ մը, ոչ ամբողջական, կը գտնուի Հայկազեան Գոլէճի գրադարանը:

Գիր ԵՒ ԱՐՈՒԵՍՏ – Պարբերաթերթ Ուսումնասիրաց Վրժ·ի պատանիներու խմբակի: Ձեռագիր: Խմբակի պատասխանատու՝ Գեղամ Մխիսեան: Խմբագիր՝ Լեւոն Վարդան (Պետիրեան): Միայն 2 թիւ: Պահպանուած օրինակներ չկան:

ՀԱ-ՊԱՊԱՄ – Օրկան Աստղիկը Խնկարկող քննադատներուն... Շարքարքերք: Մէյտան էքպէզ (Սուրիա) լոյս տեսած: Խմբորատիւ: 1918-1919: Երգիծական թերթ մը հրատարակուած հայ կամաւորներու կողմէ: Թիւ մը, կիսով ընթեռնելի, ունինք մեր տրամադրութեան տակ: Աշխատակիցներէն կը հանդիսանայ Գասպար Մենակ: 8 էջ, 29×23 սմ.:

Ա. Տէր Խաչատուրեան «Սուրիահայ Մամուլի Պատմութիւն» ուսումնասիրութեան մէջ (տես՝ «Հայկազեան Հայագիտական Հանդէս», Գ. հտր., 1972) սուրիահայ մամուլի թիւը կը հաշուէ շուրջ 85: «Պատմութիւն Սուրիոյ Հայ տպարաններու» հատորին մէջ այդ թիւը նախ կը բարձրանայ 110-ի, ապա՝ 113-ի: Այս թիւին վրայ աւելցնելու է վերոյիշեալները, եւ մենք կ'ունենանք 117 անուն թերթ: Տակաւին այս թիւը կարելի չէ վերջնական նկատել: Հաւանական կը դանենք այլ թերթերու գոյութիւնը: Ի դէպ, մատենագիտական աշխատասիրութեան մը մէջ (A post-War Bibliography of the Near Eastern Mandates, 1919-1930. Publications of the American University of Beirut, Social Science Series, No. 1, Miscellaneous Fascicle, 1936) հանդիպած ենք երկու այլ պարբերաթերթերու յիշատակութեան ցանկի մը մէջ, որ ունի հետեւեալ խորագիրը. «Սուրիոյ եւ Լիբանանի մէջ հրատարակուած հայերէն քերթերու ցանկը, 1918-1930»:

Կրք-ասիրաց. ամսագիր, 1923, 1 տարի, Հալէպ:

Պիծակ. ամսագիր, խմորատիւ, 1923, 6 ամիս, Հալէպ:

Վերապահութեամբ կու տանք այս անունները: Յանկին մէջ տեղ դտած ակներեւ սխալները պատճառ կը հանդիսանան այս վերապահութեան: Առաջին թերթի պարագային շատ հաւանաբար շրջիթ մը կայ Պէյրութ հրատարակուած «Կրթասիրաց»ին հետ (1925-1927 թթ.), քանի որ ցանկին մէջ այս վերջինը չէ յիշատակուած: Իսկ երկրորդին մասին կարելի է ըսել, թէ այդ թուականներուն նոյն անունով թերթի չենք հանդիպիր Լիբանանի մէջ. ուստի, կըրնայ նման անունով թերթ մը գոյութիւն ունեցած ըլլալ Հալէպի մէջ: Տակաւին, ցանկին մէջ, անդերէնով գրուած է թէ «Պիծակ»ը լոյս տեսած է միայն 6 թիւ:

### Բ. ՍՐԲԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Անկախ չլիշատակուած թերթերէն, հատորին մէջ տեղ զբաւած կարգ մը թերթերու մասին տրուած են սխալ տեղեկութիւններ, եղած են թերացումներ, երբեմն ալ ստեղծուած՝ շփոթ: Տանք քանի մը համոզիչ օրինակներ:

ԳՐԱՍԷՐ - Հատորին մէջ կը կարդանք. «Նախ որպէս տարեգիրք 1942-1950, ապա վերածուած ամսաթերթի՝ 1050-1952» (էջ 176): Ապա տրուած է երկար ցանկ մը աշխատակիցներու եւ յիշատակուած՝ տպարանները, ուր տպուած է թերթը զանազան շրջաններու: Այս կարճ հաստատումին մէջ տեղ զտած են բազմաթիւ անձըշուութիւններ:

ԳՐԱՍԷՐը սկսած է հրատարակուիլ 1942 Յունուարին: Առաջին թիւը՝ ձեռագիր: Փետրուար, Մարտ եւ Ապրիլ ամիսներուն՝ մեքենագիր: Առաջին տպագիր թիւը կը հանդիսանայ Յունիսի թիւը, որուն վրայ գրուած է՝ թիւ 1(5): Առաջին չորս թիւերու մասին տեղեկութիւններ տրուած են այս տպագիր թիւին մէջ: Ինչպէս կարելի է հետեցնել վերեւի մանրամասնութիւններէն, ԳՐԱՍԷՐը առաջին չորս ամիսներուն լոյս տեսած է ամիսը անդամ մը, ապա զարձեք է տարեգիրք, կամ՝ աւելի ճիշդ ընտրուած՝ պիտի ըլլար «պարբերաթերթը» կամ «պարբերագիրքը», ինչպէս գրուած է թերթի ճակատին: 1944, 1950 եւ 1951 տարիներուն զոյգ թիւեր լոյս տեսած են: Թերթը ընդամէնը լոյս տեսած է 16 թիւ: 1948 թ.ի թիւը (թիւ 11) լոյս տեսած է Տպ. Տէր-Սահակեան, եւ ոչ թէ տպ. «Գոլէճ», ինչպէս կ'ըսուի հատորին մէջ: Իսկ աշխատակիցներու ցանկին մէջ ի՞նչպէս կարելի է մոռնալ անունները Անդրանիկ Թերզեանի եւ Ստեփան Ալաջաջեանի:

ՄՇԱԿՈՅԹ - Հատորին մէջ կը կարդանք. «Պարբերաթերթ Բեթէլ Եկեղեցւոյ Գրխտոնէականա Ջանից Միութեան, Հալէպ: 1952 Ապրիլ - 1953: 24 էջ, մեքենագիր, միայն 12 էջը, 30×22 սմ.: Թերթին խմբագիրին անունը չէ յիշատակուած:» (էջ 185):

Զարմանք կը պատճառեն այս մանրամասնութիւնները մեզի: «Մշակոյթ»ի 1952 թ.ի Ապրիլի թիւը (այսինքն՝ թիւ 1), կը բաղկանայ 32 էջերէ, լրիւ տպագիր, 27×19 սմ.: Խմբագրականը ստորագրած է Ա. Շանլեան, բան մը՝ որ ենթադրել կու տայ թէ ան է թերթին խմբագիրը:

ՍՈՒՐԻԱԿԱՆ ԱԼՊՈՄ - Գրախօսուող հատորը կու տայ հետեւեալ մանրամասնութիւնները. «Պատկերազարդ եւ զբական բաժիններով: Հրատ. Կիւլեսէր Տեմիրճեան զբատան: Հալէպ, տպ. «Արար» 1927-1929, երեք տարի: 112-138 էջ, 20×14 սմ.: Պատրաստեց՝ Եղուարդ Ոսկերիչեան: ...Ալպոմը ունի նաեւ զբական բա-

Ժին: ...1928 եւ 1929 տարիներուն ալպոմին աշխատակցած են...» (էջ 218):

Այս կարճ մէջբերումին մէջ կը վխտան բազմաթիւ սխալներ: Ա. հատորը կը բաղկանայ 72 էջերէ, տպագրուած՝ տպ. «Արաքս», պատկերազարդ ալպոմ մը, առանց դրական բաժնի կամ յօդուածներու: Չափ՝ 14×20 սմ.: Բ. եւ Գ. հատորները տպուած են տպ. «Արարա»: Բ. հատորը կը բաղկանայ 132 էջերէ, պատկերազարդ եւ կենսագրական ծանօթութիւններ կու տայ միայն: Գ. հատորը, որ կը բաղկանայ 176 էջերէ, ունի դրական բաժին մը եւ աշխատակիցներ: Գրական բաժին ըսելով պէտք է հասկնալ այլազան յօդուածներ, ոչ անսպաժման գեղարուեստական բովանդակութեամբ:

ԱԶԳԱՅԻՆ ԽԱՄԱՃԻԿՆԵՐ – Դամասկոս, 1918–1919:

Այս թերթին մասին առաջին տեղեկութիւնը կը հայթայթէ Յովհ. Պետրոսեան: Ան կը գրէ. «Ձաւեշտաթերթ: Դամասկոս, 1918:» («Հայ Պարբերական Մամուլի Բիբլիոգրաֆիա», հտր. 2, էջ 303): Միայն այսքան: Ա. Տէր Սաշատուրեան կու տայ խմբագրին անունը՝ Արմենակ Տէր-Յակոբեան, վիմատիպ ըլլալը կը նշէ եւ զայն կը գետեղէ 1919 թ.ին («Հայկագեան Հայագիտական Հանդէս», Գ. հտր., էջ 222): Ա. Կիրակոսեան «Հայ Պարբերական Մամուլի Մատենագիտութիւն» հատորին մէջ ասոնց վրայ կ'աւելցնէ «Աղագային խամածիկներ»ուն շարաթաթերթ ըլլալը, տպ. «Ֆէյհա» տպուելը, 1 էջ (34×23) ըլլալը եւ խմբագրին անունը՝ Արմենակ Տէր-Յակոբեան: Թուական կու տայ 1918–1919–ը (էջ 191):

Կ'անդիտանանք վերոյիշեալ տեղեկութիւններուն աղբիւրը կամ աղբիւրները: Հիմնուելով «Աղագային Խամածիկներ» թերթի թիւ 2–ի տուեալներուն, կարելի է մի քանի ճշդումներ եւ յաւելումներ ընել: Արդարեւ թերթը վիմատիպ է: Երկրորդ թիւին թուականն է Մարտ 23, 1919: Լոյս տեսած է Դամասկոս, կողմնակի գրուած է՝ տպ. «Ֆէյհա»: Չափը՝ 35×23.5 սմ.: Թերթը կը բաղկանայ մէկ էջէ: Թերթին մէկ երեսին վրայ տպուած է: Գինն է՝ 40 փրյ.: Կայ առաջնորդի մը երգիծանկարը, Սարազան ստորագրութեամբ: Միակ գրութիւնը՝ 52 տողերէ բաղկացած երգիծական չափածոյ գրութիւն մըն է, տպուած ծաղրանկարը ներկայացնող կրօնականին դէմ: Գրութիւնը ստորագրած է Վահան Խիւտալէրտեան, որ շատ հաւանաբար ալ կը հանդիսանայ թերթին խմբագիրը:

Դժբախտաբար սխալները, չիտթները, թիւերիմացութիւնները կը շարունակուին այլ թերթերու պարագային, եւ աւելի կը շեշտուին հրատարակուած գիրքերու առիթով:

Գիրքերու պարադային, կարելի է կատարել քանի մը հիմնական մատնանշումներ.



## Ա. ԶԵՒՇԱՏԱԿՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

Որքան ալ որ հատորը խմբագրողները ի սկզբանէ կը զբեն թէ իրենց ներկայացուցած 456 անուն զիրքերէն դուրս տակաւին կրնան գտնուիլ բազմաթիւ զիրքեր, անբժշկելի կը մնայ շատ մը զիրքերու բացակայութիւնը, զիրքեր՝ որոնք մատչելի են, յաճախ լոյս տեսած անցնող երկու կամ երեք տասնամեակներուն: Անոնցմէ յիշենք՝

Արսէն Արծրունի, Հերոսամարտը. հրատարակուած Վանի Ապրիլեան Հերոսամարտի 16-րդ տարելիցի առթիւ: Տպ. Գոլէճ, 1931, 23 էջ: Վասպուրականի հայրենակց. միութեան հրատարակութիւն:

Նիկոլ Աղբալեանի Յիշատակին (մահուան Ա. տարելիցին առթիւ): Հրատարակութիւն Հալէպահայ ուսուցչական միութեան: Տպ. Նայիրի, 1948, 27 էջ:

Յակոբ Նորունի, Դողդոջ կայծեր, Հալէպ, 1943:

Ներսէս Ազ. Քհնյ. Թավուզեան, Տեսուրնդառաջ: Մուտքը (էջ 2-4) հայերէն: Բովանդակութիւնը՝ հայտառ թրքերէն: Տպ. «Արարա», 1932, 27 էջ:

Հրանտ Տէվէճեան, Աշխարհագրութիւն Սուրիոյ եւ Լիբանանի. բնական, քաղաքական եւ տնտեսական: Ա. տիպ: Տէր-Սահակեան, 1933, 69 էջ:

Սարգիս Տէմիրճեան, Պատմութիւն Ատիամանի, Յ. Ք. 898-1914: Հրատ. Ատիամանի Երիտասարդաց Միութեան, Հալէպ: Տէր-Սահակեան, 1948, 66 էջ, պատկղ.:

Յովսէփ Տէր-Վարդանեան, Մարաշի ջարդը 1920-ին եւ պատմական համառօտ ակնարկ մը իր անցեալին վրայ: Տպ. Արաքս, 1927, 132 էջ:

Թէեւ այս վերջին զիրքին անունը յիշատակուած է, սակայն այլ մանրամասնութիւններ կը պակսին, քանի որ կարելի չէ եղած գտնել զայն:

## Բ. ՍՈՍԼ ԱՐՏԱԳՐՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

Բաւական մեծ թիւով զիրքեր յիշատակուած են թիւր ձեւով: Կրկին տանք կարգ մը օրինակներ.

էջ 66, թիւ 264 - «Սրտի կայլակներ», պիտի ըլլայ՝ «Սրտի Ալեակներ»:

էջ 36, թիւ 90 - «Րապպըն հուզուրունտա պիր էօմիւր», պիտի ըլլայ՝ «Րապպըն հուզուրընտա պիր էօմը»:

էջ 36, թիւ 89 - «Տէրոջը ներկայութեան կեանք մը», պիտի ըլլայ՝ «Տէրոջ ներկայութեան մէջ կեանք մը»:

Այս վերջին երկու զիրքերը ներկայացուած են որպէս մէկ

գիրք, լոյս տեսած 1939 թուականին: Մինչդեռ հայաստան թրքերէնը լոյս տեսած է 2 տարի առաջ: Իսկ 1939 թ.ին լոյս տեսածը հայացուցած է Ղ. Մարանեան: Ուրեմն, կ'ունենանք երկու անջատ հատորներ:

Էջ 36, թիւ 92 - «Յարութիւն պիրատէր Չարխրթեանըն մուխթասար թերճիմէ հալը». քերնիմէ պիտի ըլլայ՝ քերնիմէի: Իսկ 192 էջը՝ 92 էջ:

Էջ 57, թիւ 216 - «Այնթասպի Քրիստոնասիրաց ընկերութիւն», պիտի ըլլայ՝ Քրիստոնասիրաց: Իսկ 12 էջը՝ 62 էջ:

Էջ 40, թիւ 111 - «Օրագրութիւն ուղեւորութեան յԵւրոպա Սահակ Բ. Կաթողիկոս Կիլիկիոյ», պիտի ըլլայ՝ Կաթողիկոսին:

Էջ 40, թիւ 107 - «Նոր ուղիներ. հասարակական, մանկավարժական գիրք», պիտի ըլլայ՝ «Նոր ուղիներ. հասարակագիտական-մանկավարժական»: Իսկ 87 էջը՝ ԺԳ, 184 էջ:

#### Գ. ԷՋԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑ

Հատորը կազմողները աշխատած են իւրաքանչիւր գիրքի, հրատարակութեան պարագային տալ բոլոր մանրամասնութիւնները. անուն, վայր, ժամանակ, տպարան, ծաւալ, չափ, խմբագիրներ, յօդուածագիրներ: Անշուշտ մատենագիտական աշխատանքի մը համար կարելոր եւ կենսական մանրամասնութիւններ են ասոնք, որ գործ մը կը դարձնեն գիտական, անոր կու տան կշիռ, ծանրութիւն:

Գնահատելով հանդերձ այս ուղղութեամբ կատարուած ճիշդ, հարկ է նշել որ յատկապէս էջագրութեանց պարագային սպրդած են բազմաթիւ սխալներ, եւ աւելի կարելոր անտեսում մը՝ այս ուղղութեամբ հետեւողական մեթոտի մը բացակայութիւնը:

Առաջին հերթին, կարգ մը գիրքեր չեն ունեցած էջագրում: Նման պարագաներու, հատորը կազմողները իրենք հաշուած են էջերը: Մինչդեռ մատենագիտական օրէնքները կը պահանջեն, որ էջագրութենէ զուրկ գիրքերու պարագային յիշատակուի իրողութիւնը, ապա տրուի էջերուն թիւը: Առանց էջագրութեան գիրքերու շարքէն տանք մի քանի օրինակ. Չարեհ Մելքոնեանի «Ես եւ Մարգրիկ»ը, Պետրոս Պարզեւի «Մշուշտ կատարներ»ը, «Սուրիական Ալպում»ը, Արամ Արմանի «Խաչքուռ»ը:

Երկրորդ պարագայ մը. երբ գիրքի մը էջերու թիւը պիտի տրուի, ուշագրութիւն պէտք է դարձնել, որ գիրքին սկիզբը կամ աւարտին, հայկական կամ հռոմէական թուանշաններ կրող էջեր չըլլան: Եթէ կան, մատենագիտական օրէնքները կը պահանջեն, որ էջաթիւի յիշատակութեան մէջ նկատի առնուին նաեւ անոնք: Իսկ եթէ կ'ուզենք որ մատենագիտական աշխատասիրութիւնը ըլլայ գի-

տական, պարտինք նաեւ յիշատակել զիրքին սկիզբին կամ աւարտին գրուած այն էջերը, որոնք էջագրուած չեն երբեմն:

էջագրումի ուղղութեամբ այլ նշում մը կարգ մը զիրքերու պարագային, զիրքին աւարտին գրուած բովանդակութիւնները էջաթիւ չունին: Մատենագիտական աշխատասիրութեան մը մէջ, երբ կարգ մը զիրքերու պարագային, էջաթիւերուն վրայ կ'աւելցնենք թիւը այդ էջերուն, չենք կրնար զայն անտեսել այլ զիրքերու պարագային: Հարկ է ճշգեղ ուղղութիւն մը եւ ըլլալ հետեւողական: Նման մեղանշումներ կարելի է գտնել Ժ. Հաճեանի «Բարձունքներու կատարին» եւ «Մեր երթը» հատորներուն, Շահպանի «Վերջալոյս» եւ «Մովսէր», ինչպէս նաեւ բազմաթիւ այլ հատորներու պարագային:

Տակաւին, ասոնցմէ անկախ, կան զիրքեր, որոնց էջաթիւերը սխալ են տրուած: Մի քանի օրինակներու հանդիպեցանք նախապէս: Յիշենք մի քանի ուրիշներ. Ե. Ս. Թովմասեանի «2. Թ. Սքըւո՛ Աւետարանիչ եւ Ռահվիրայ» հատորին էջերուն թիւը 21 է եւ ոչ թէ 22. Ե. Կ. Տէմիրճեանի «Աշակերտին երգարանը» հատորին էջերուն թիւը՝ 82 եւ ոչ թէ 120. Դ. Կ. Ճիզմեճեանի «Յովհեր. Կեանք Բանէն» Բ. հատորը 112 էջ կը հաշուէ եւ ոչ թէ 104: Արմիսի «Դրուագներ Նկարչական Կեանքէս» հատորը ունի 136 հաշուուած էջ, եւ ոչ թէ 132: Շարքը հեշտօրէն կարելի է երկարել... Սակայն փակենք հետաքրքրական օրինակով մը. հրատարակուած զիրքերու շարքին յիշատակուած է նաեւ մեր կողմէ գրախօսուող զիրքը, որուն էջերուն թիւը ներկայացուած է 235, մինչդեռ պիտի ըլլայ 264:

**Դ. ՍՈՒՐԻՈՅ ՍԱՀՄԱՆՆԵՐԷՆ ԴՈՒՐՍ ՏՊՈՒԱԾ  
ԳԻՐՔԵՐՈՒ ՊԱՐԱԳԱՆ**

Բանասէրներն ու մատենագիտական աշխատանքներով զբաղողները, ապագային, մինչեւ իսկ ներկայիս, շփոթութիւններէ զերծ կացուցանելու մտահոգութեամբ, հարկ է արձանագրել հետեւեալ իրողութիւնը. յատկապէս քաղաքական մտահոգութիւններով, կարգ մը զիրքերու վրայ որպէս հրատարակութեան վայր նշանակուած է Հալէպը, սակայն անոնց հրատարակութեան իրական վայրը հանդիսացած է Պէյրութը: Նման պարագաներու տպարանը չէ նշուած: Ասոնց շարքին կը պատկանի Եղիա Նաճարեանի «Դաշնակ Ղեկավարութիւնը Օտարի Ծառայութեան մէջ» հատորը: Հակառակ որ ծանօթութեանց բաժնին մէջ կ'ըսուի թէ տպարանը չէ նշուած, զիրքը գեանդուած է տպարան «Շիրազ»ի հրատարակած զիրքերու ցանկին մէջ: Նաճարեանի այս զիրքը տպուած է Պէյրութ: Կան ուրիշ զիրքեր ալ, որոնց տպագրութեան վայրը նշուած է Հալէպը, սակայն

տպուած Պէյրութ, որոնց մասին հատորին մէջ ոչ մէկ ակնարկութիւն եղած է: Անոնցմէ են՝ «Հնչակեան Պարբերագիրք»ը, 1952 թ.ին տպուած, եւ Հայգաւակին (Յ. Մատէեան) «Հայրենադաւերու նոր Արշաւանքը Հայաստանեայց Եկեղեցիին դէմ» հատորիկը (34 էջ), 1949 թ.ին լոյս տեսած: Շատ հաւանաբար տակաւին կան գիրքեր, որոնք նոյն պարագային մէջ կը գտնուին:

### Ե. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՅ ԹՈՒԱԿԱՆՆԻ ՍՈՍԱԼ

Կարգ մը հրատարակութիւններու պարագային տպագրութեան թուականի սխալը շատ բացայայտ է: Այլ պարագաներու՝ մէկ կամ երկու տարիներուն շփոթ մը կայ: Ե. Ս. Թովմասեանի «Զ. Թ. Սքըս՝ Աւետարանիչ եւ Ռահվիրայ» (այս է Ղըքոյկին լրիւ անունը, եւ ոչ թէ «Զ. Թ. Սքըս») հատորը լոյս է տեսած 1929 թ.ին եւ ոչ թէ 1930 թ.ին: Գ. Կ. Ճիզմէճեանի «Յովքեր Կեանց Բանկն» Բ. հատորը լոյս տեսած է 1960 թ.ին, եւ ոչ թէ 1953 թ.ին: «Աշակերտին Երգարանը»՝ 1959 թ.ին, փոխան 1958 թ.ի: Արամ Գիտակեցի «Արաբական Աստղերու Տակ Հոգիս Կ'երգէ» հատորը՝ 1964 թ.ին եւ ոչ թէ 1963 թ.ին:

Կ'ուզենք շեշտել իւրաքանչիւր պարագայի կատարուած նշումները հիմնուած են օրինակներու վրայ: Այլապէս թերութիւններու, պակասներու, անճշտութիւններու ցանկը պիտի երկարէր...

Վերելի սրբագրութիւնները, ճշգրտմանը երբեք չեն ըլլար կատարուած աշխատանքը թերզնահատելու մտադրութեամբ: Կատարուածը, որպէս առաջին փորձ, զնահատանքի արժանի աշխատանք մըն է: Առանց այդ աշխատանքին կարելի պիտի չըլլային (առաջին հերթին, մեր կողմէ) կատարուած յուշումները, սրբագրութիւնները եւ ճշգրտմանը: Դրուած է հիմը, որուն վրայ հարկ է կառուցել շէնքը, ճամբու ընթացքին կատարելով սրբագրութիւններ, ներմուծելով նոր տուեալներ:

Սակայն, քիչ մը աւելի բծախնդրութեամբ, նաեւ օգտագործումովը առաջին հերթին Պէյրութ գտնուող մատենադարաններու, ապա՝ հայրենիքի եւ արտասահմանի այլ մատենադարաններու կարելիութիւններուն, կարելի պիտի ըլլար խուսափել շատ մը տարբահան սխալներէ եւ յիշատակուած գիրքերու եւ թերթերու ցանկը կարելի պիտի ըլլար շատ աւելի լրիւ դարձնել: Բազմահարիւր սրխալներու, անճշտութիւններու եւ թերիներու առկայութիւնը, ինչպէս նաեւ չիշատակուած հրատարակութիւններու պատկառելի թիւը պէտք է մղեն հրատարակիչները վերատեսուած նոր հրատարակութեան մը պատրաստութեան:

ԺԻՐԱՅՐ ԴԱՆԻԷԼԵԱՆ